ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 145-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2009.08.15/24(342) Հոդ.267	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Բնապահպանության նախարար	*Ընդունման ամսաթիվը*	16.07.2009
Ստորագրող մարմինը	Բնապահպանության նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	16.07.2009
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	25.08.2009	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
3 օգոստոսի 2009 թ.
Պետական գրանցման թիվ 10509279

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

N 145-Ն

16 հուլիսի 2009 թ.
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Կենդանական աշխարհի պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին» N 1441-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը.

Հրամայում եմ՝

Հաստատել՝
«Կենդանական աշխարհի պետական կադաստրի վարման մեթոդական ուղեցույց»-ը՝ համաձայն հավելվածի:

Նախարար՝ **Ա. Հարությունյան**

Հավելված
ՀՀ բնապահպանության նախարարի
2009 թ. հուլիսի 16-ի
N 145-Ն հրամանի

Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Ց Ց

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդական ուղեցույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի պետական կադաստրի (այսուհետ՝ կադաստր) վարման, այդ թվում՝ կադաստր մուտք գործող փաստաթղթերի գրանցման և կադաստրից տվյալների տրամադրման ընթացակարգը:

2. Կադաստրի տվյալները գրանցվում են «Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների գրանցամատյան»-ում՝ համաձայն N 1 Ձևի:

3. «Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների գրանցամատյան»-ը վարում են ինչպես փաստաթղթային, այնպես էլ էլեկտրոնային ձևով:

4. Կադաստրի համապատասխան մասը վարող յուրաքանչյուր լիազոր մարմին հաշվառման տվյալները տրամադրում է կադաստր վարող Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝ կենդանական աշխարհի պետական կադաստրի տեղեկատվական համակարգ ստեղծելու համար:

5. Կադաստրում գրանցման համար տրամադրած տվյալներում որևէ անճշտություն հայտնաբերելու դեպքում կազմվում է ակտ գրանցամատյան վարող պատասխանատու անձանց կողմից, այդ մասին տեղյակ պահելով տվյալ մարմնի ղեկավարին:

6. Կադաստր մուտք գործող փաստաթղթերը գրանցվում են «Կենդանական աշխարհի պետական կադաստր մուտք գործող փաստաթղթերի գրանցամատյան»-ում՝ համաձայն N 2 Ձևի:

7. Կադաստրի տվյալների տրամադրման փաստաթղթերը գրանցվում են «Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման փաստաթղթերի գրանցամատյան»-ում՝ համաձայն N 3 Ձևի:

8. «Կենդանական աշխարհի պետական կադաստր մուտք գործող փաստաթղթերի գրանցամատյան»-ը և «Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման փաստաթղթերի գրանցամատյան»-ը լրացվում են գրիչով՝ առանց կրճատումների, ջնջումների և տողերը բաց թողնելու, պարզ, ընթեռնելի ձեռագրով: Գրանցամատյաններում գրանցման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի մեկից:

II. ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. «Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների գրանցամատյան»-ը (Ձև N 1) համալրվում է և անհրաժեշտության դեպքում ճշտվում է տվյալների լրացումների և փոփոխությունների օպերատիվ գրառմամբ, ընդ որում լրացումներն ու փոփոխությունները կարող են կատարվել, եթե առկա են դրանք հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև այդ փաստաթղթերի վերաբերյալ իրավասությամբ օժտված պաշտոնատար անձի կողմից «գրանցել» մակագրությունը:

10. Կադաստրի տվյալների լրացումներն ու փոփոխությունները գրառվում են հետևյալ ձևով.

1) Տող 1.1-ում բերվում է կենդանական տեսակի (այսուհետ՝ տեսակ) հայերեն գիտական անվանումը,

2) Տող 1.1.1-ում բերվում է տեսակի հայերեն տեղական/ավանդական անվանումը/անվանումները, եթե այդպիսիները կան, նշելով, թե որ մարզերում են վերջիններս օգտագործվում,

3) Տող 1.2-ում բերվում է տեսակի լատիներեն գիտական անվանումը, նշելով նաև հոմանիշները, եթե այդպիսիները կան,

4) Տող 1.2.1-ում բերվում է տեսակը նկարագրողի ազգանունը և նկարագրման տարեթիվը,

5) Տող 1.3-ում քառակուսում կատարվում է նշում այն դեպքում, եթե տվյալ տեսակը պատկանում է անողնաշարավորներին: Ողնաշարավորների տիպին պատկանելու դեպքում այս տողում որևէ նշում չի կատարվում,

6) Տող 1.3.1-ում քառակուսում կատարվում է նշում այն դեպքում, եթե տվյալ տեսակը պատկանում է ողնաշարավորների տիպին: Անողնաշարավորներին պատկանելու դեպքում այս տողում բերվում է այն տիպի անվանումը, որին պատկանում է տվյալ տեսակը՝ լատիներեն և հայերեն,

7) Տող 1.3.2-ում բերվում է տեսակի դասը՝ լատիներեն և հայերեն,

8) Տող 1.3.3-ում բերվում է տեսակի կարգը՝ լատիներեն և հայերեն,

9) Տող 1.3.4-ում բերվում է տեսակի ընտանիքը՝ լատիներեն և հայերեն,

10) Տող 1.4.1-ում բերվում է տեսակի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում (1987թ.) նշված կարգավիճակը (ստատուսը),

11) Տող 1.4.2-ում կատարվում է նշում այն քառակուսում, որի դիմաց նշված վտանգվածության կարգավիճակը համապատասխանում է Բնության պահպանության միջազգային միության (IUCN) կարգավիճակին՝ անհետացած (EX), անհետացած բնական պայմաններում (EW), ծայրահեղ վտանգված (CR), վտանգված (EN), խոցելի (VU), խոցելի դառնալու եզրին (NT), քիչ մտահոգող (LC), տվյալների անբավարարություն (DD) կամ ճգնահատված (NE),

12) Տող 1.4.3-ում նշում է կատարվում այն դեպքում, եթե տվյալ տեսակը գտնվում է Վայրի ֆաունայի և ֆլորայի

վտանգված տեսակների միջազգային առևտրի կոնվենցիայի (CITES) պահպանության ներքո: Այս տողում նշումը կատարվում է այն քառակուսում, որի դիմաց նշված է տվյալ տեսակի գրանցման հավելվածը,

13) Տող 2.1-ում բերվում է տեսակի քանակությունը բնության մեջ և դրա փոփոխության միտումները («ավելանում է», «կայուն է», «նվազում է», «քանակության փոփոխության միտումները հայտնի չեն»): Ստույգ թվերի բացակայության դեպքում բերվում են նրանց սահմանները, իսկ տվյալների բացակայության դեպքում կատարվում է նշում՝ «տվյալները բացակայում են»,

14) Տող 2.2-ում բերվում է տեսակի քանակությունը անազատ և կիսաազատ պայմաններում: Ստույգ թվերի բացակայության դեպքում բերվում են նրանց սահմանները, իսկ տվյալների բացակայության դեպքում կատարվում է նշում՝ «տվյալները բացակայում են»,

15) Տող 3.1-ում կատարվում է նշում բոլոր այն քառակուսիներում, որի դիմաց նշված մարզում տեսակը հանդիպում է ներկայումս, կամ հանդիպում էր պատմական անցյալում,

16) Տող 3.2-ում թվարկվում են այն աշխարհագրական տարածքների անվանումները, որտեղ տեսակը հանդիպում է ներկայումս, կամ հանդիպում է պատմական անցյալում,

17) Տող 3.3-ում կատարվում է նշում բոլոր այն քառակուսիներում, որի դիմաց նշված բարձրությունների վրա տեսակը հանդիպում է ներկայումս, կամ հանդիպում էր պատմական անցյալում,

18) Տող 3.4-ում կատարվում է նշում բոլոր այն քառակուսիներում, որի դիմաց նշված գետավազաններում տեսակը հանդիպում է ներկայումս, կամ հանդիպում էր պատմական անցյալում,

19) Տող 4-ում բերվում է պաշարը՝ աշխարհագրական որոշակի տարածքում տեսակի օգտագործման ենթակա քանակությունը,

20) Տող 5-ում կատարվում է նշում բոլոր այն քառակուսիներում, որի դիմաց նշված լանդշաֆտներում տեսակը հանդիպում է ներկայումս, կամ հանդիպում էր պատմական անցյալում,

21) Տող 6-ում թվարկվում են տեղեկատվություն ներկայացնող բոլոր կազմակերպություններն ու անձինք,

22) «Սպառնալիքներ»-ի 7.1-7.12 տողերում կատարվում է նշում բոլոր այն քառակուսիներում, որոնց սպառնալիքները առկա են ներկայումս, կամ կարող հնարավոր լինել տեսանելի ապագայում,

23) Տող 8.1-ում բերվում է տեսակի օգտագործման իրավունքը տրամադրող լիազոր կազմակերպության/կազմակերպությունների անվանումը/անվանումները,

24) Տող 8.2-ում բերվում է օգտագործման տեսակը՝ գյուղատնտեսական (սելեկցիա, հողառաջացում), արդյունագործական (որսորդություն, ձկնորսություն, հավաք, այդ թվում՝ կենդանիների կենսագործունեության արգասիքների հավաք և մթերում), սոցիալական (սիրողական որս և ձկնորսություն), բնապահպանական, գեղագիտական գիտահետազոտական,

25) Տող 8.3-ում բերվում է օգտագործման համար թույլատրված քանակը,

26) Տող 8.4-ում բերվում է փաստացի օգտագործված քանակը,

27) «Պահպանության ու կայուն օգտագործման միջոցառումներ»-ի բոլոր տողերում (9.1-9.7) կատարվում է նշում բոլոր այն քառակուսիներում, որոնց առաջ նշված միջոցառումները առկա են ներկայումս, կամ նախատեսվում են իրականացվել տեսանելի ապագայում,

28) Տող 10-ում բերվում է տեղեկատվություն տեսակի կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ (բազմացում, սնունդ, հիվանդություններ, մակաբույծներ և այլն), ինչպես նաև առաջարկություններ տեսակի պահպանության և կայուն օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,

29) Տող 11-ում բերվում է օգտագործված գրականության ամբողջական ցանկը, ներառյալ էլեկտրոնային և բանավոր հաղորդակցությունները: Էլեկտրոնային կամ բանավոր հաղորդակցության դեպքում բերվում է հաղորդակցությունը ներկայացրած անձի անունը, ազգանունը և նրա կոնտակտային տվյալները (բնակության կամ աշխատանքի վայրը, հեռախոսի համարը, էլեկտրոնային փոստը),

30) Տող 12-ում բերվում են ծանոթագրություններ, օրինակ՝ տվյալ տեսակի կոնկրետ պոպուլյացիայի կամ պոպուլյացիաների վիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում նույն հիպսոմետրիկ պայմաններում: Ծանոթագրությունները համարակալվում են և համարները կրկնօրինակվում են համապատասխան տողերում,

31) Տող 13-ում բերվում են պատասխանատու կատարողի տվյալները՝ անունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսի և ֆաքսի համարները, էլեկտրոնային հասցեն:

11. «Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների գրանցամատյան»-ի աղյուսակները լրացնելիս՝ ցուցանիշի բացակայության դեպքում համապատասխան սյունակում դրվում է զիծ, իսկ պահանջվող ցուցանիշների դիտարկումների չիրականացնելու դեպքում՝ գրառվում է «չի իրականացվել»:

III. ԿԱԴԱՍՏՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

12. Կադաստր մուտք գործող փաստաթղթերը գրանցվում են «Կենդանական աշխարհի պետական կադաստր մուտք գործող փաստաթղթերի գրանցամատյան»-ում (Ձև N 2) հետևյալ ձևով.

1) Սյունակ 1-ում բերվում է գրանցամատյանում փաստաթղթի գրանցման հերթական համարը,

2) Սյունակ 2-ում բերվում է փաստաթուղթը տրամադրող մարմնի անվանումը,

3) Սյունակ 3-ում բերվում է փաստաթուղթը ստորագրող պաշտոնատար անձի անունը, ազգանունը,

4) Սյունակ 4-ում բերվում է փաստաթղթի տրամադրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը,

5) Սյունակ 5-ում բերվում է փաստաթղթի տեսակը /հաշվետվություններ, աղյուսակներ, գիտական հոդվածներ և այլն/,

6) Սյունակ 6-ում բերվում է տրամադրվող փաստաթղթի վերնագիրը՝ ամբողջությամբ,

7) Սյունակ 7-ում բերվում է փաստաթղթի էջերի թիվը,

8) Սյունակ 8-ում բերվում են փաստաթղթի գրանցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը:

IV. ԿԱԴԱՍՏՐԻՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

13. Պետական կադաստրից տրամադրված տվյալները գրանցվում են «Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման փաստաթղթերի գրանցամատյան»-ում (Ձև N 3) հետևյալ ձևով.

1) Սյունակ 1-ում բերվում է հայտի գրանցման հերթական համարը,

2) Սյունակ 2-ում բերվում են հայտի ստացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը,

3) Սյունակներ 3-5-ում բերվում են հայտատուի տվյալները, որոնցում ներառված են կազմակերպական-իրավական ձևը (սյունակ 3), անունը, ազգանունը (սյունակ 4), գտնվելու /քաղաքացիների դեպքում՝ բնակության/ վայրը, հեռախոսի համարը (սյունակ 5),

4) Սյունակ 6-ում բերվում է պետական կադաստրից օգտվելու նպատակը /ուսուցողական, գիտահետազոտական, լրատվական, տնտեսական, և այլն/,

5) Սյունակներ 7-9-ում բերվում են պահանջվող տեղեկատվության համառոտ բովանդակությունը (սյունակ 7), ձևը (սյունակ 8), էջերի թիվը (սյունակ 9),

6) Սյունակ 10-ում բերվում են տվյալների տրամադրման տարեթիվը, ամիսը և ամսաթիվը,

7) Սյունակ 11-ում հայտատուն իր ստորագրությունով հավաստում է տվյալների ստացումը:

Ձև N 1

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1.	ԿԵՆԴԱՆՈՒ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ									
1.1	*Հայերեն անվանումը*									
1.1.1	Հայերեն տեղական/ավանդական անվանումը/անվանումները									
1.2	*Լատիներեն անվանումը*									
1.2.1	Հեղինակը և տարին									
1.3	*Կարգաբանությունը*								❑ Անողնաշարավոր	
1.3.1	Տիպը	❑ Ողնաշարավոր								
1.3.2	Դասը									
1.3.3	Կարգը									
1.3.4	Ընտանիքը									
1.4	*Վտանգվածության կարգավիճակը*									
1.4.1	Հայաստանի Հանրապետության Կարմիր գիրք									
1.4.2	Բնության պահպանության միջազգային միություն (IUCN)	❑ EX	❑ EW	❑ CR	❑ EN	❑ VU	❑ NT	❑ LC	❑ DD	❑ NE
1.4.3	Վայրի ֆաունայի և ֆլորայի վտանգված տեսակների միջազգային առևտրի կոնվենցիա (CITES)	❑ Հավելված I			❑ Հավելված II			❑ Հավելված III		
2.	ՔԱՆԱԿԸ									
2.1	*բնության մեջ*									
2.2	*անազատ պայմաններում*									
3.	ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ									
3.1	*Վարչատարածքային*	❑ Արագածոտնի մարզ							❑ Արարատի մարզ	

	❑ Արմավիրի մարզ	❑ Գեղարքունիքի մարզ	❑ Լոռու մարզ
	❑ Կոտայքի մարզ	❑ Շիրակի մարզ	❑ Սյունիքի մարզ
	❑ Վայոց ձորի մարզ	❑ Տավուշի մարզ	❑ Երևան քաղաք
3.2	*Աշխարհագրական*		
3.3	*Հիպսոմետրիկ*	❑ < 500 մ ծովի մակարդակից	❑ 501-1000 մ ծովի մակարդակ.
	❑ 1001-1500 մ ծովի մակարդ.	❑ 1501-2000 մ ծովի մակարդ.	❑ 2001-2500 մ ծովի մակարդ.
	❑ 2501-3000 մ ծովի մակարդ.	❑ 3001-3500 մ ծովի մակարդ.	❑ > 3501 մ ծովի մակարդակից
3.4	*Գետավազանային*	❑ Որոտանի ավազան	❑ Ողջիի ավազան
	❑ Մեղրիի ավազան	❑ Դեբեդի ավազան	❑ Աղստևի ավազան
	❑ Քոի փոքր վտակների ավազան	❑ Ազատի ավազան	❑ Վեդիի ավազան
	❑ Արփայի	❑ Սևանա լճի ավազան	❑ Հրազդանի ավազան
	❑ Քասախի	❑ Ախուրյանի ավազան	❑ Մեծամորի ավազան
4.	ՊԱՇԱՐԸ		
5.	ԲՆԱԿՄԻՋԱՎԱՅՐԵՐԸ	❑ անապատ-կիսաանապատ	❑ լեռնային տափաստան
	❑ մարգագետնա-տափաստան	❑ անտառ	❑ մերձալպյան մարգագետին
	❑ ալպյան մարգագետին	❑ ժայռ	❑ ճահիճ
	❑ գետ	❑ լիճ	❑ ջրամբար
	❑ ցանքս	❑ այգի/պուրակ	❑ բնակավայր
6.	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԸ		
7.	ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ		

	Սպառնալիքի անվանումը	առկա	հնարավոր
7.1	*Քաղաքաշինության զարգացում*	❑	❑
7.1.1	Բնակելի տարածքներ	❑	❑
7.1.2	Արդյունագործական և առևտրական տարածքներ	❑	❑
7.1.3	Տուրիստական և ռեկրեացիոն տարածքներ	❑	❑
7.2	*Գյուղատնտեսության զարգացում*	❑	❑
7.2.1	Միամյա և բազմամյա խոտաբույսերի ցանքեր	❑	❑
7.2.2	Այգիներ և անտառտնկարկներ	❑	❑
7.2.3	Անասնաբուծություն	❑	❑
7.2.4	Ձկնաբուծություն	❑	❑
7.3	*Էներգիայի արտադրություն և հանքահանում*	❑	❑
7.3.1	Հանքարդյունաբերություն	❑	❑
7.3.2	Վերականգնվող էներգիա	❑	❑
7.4	*Տրանսպորտ և փոխադրումներ*	❑	❑
7.4.1	Ավտոճանապարհներ և երկաթուղային գծեր	❑	❑
7.4.2	Էլեկտրագծեր, հեռախոսագծեր	❑	❑
7.4.3	Գազի, ջրի խողովակաշարեր	❑	❑
7.4.4	Թռիչքային հարթակներ	❑	❑
7.5	*Կենսաբանական ռեսուրսների օգտագործում*	❑	❑
7.5.1	Ցամաքային կենդանիների և թռչունների որս և հավաք	❑	❑
7.5.2	Կենդանիների որս և հավաք	❑	❑
7.5.3	Ձկնորսություն և ջրային կենդանիների հավաք	❑	❑
7.6	*Մարդու միջամտում և անհանգստություն*	❑	❑
7.6.1	Ռեկրեացիոն գործունեություն	❑	❑
7.6.2	Պատերազմ, քաղաքացիական խռովություններ	❑	❑
7.6.3	Աշխատանքներ և այլ գործողություններ	❑	❑
7.7	*Բնական համակարգերի ձևափոխում*	❑	❑

7.7.1	Հրդեհներ և հակահրդեհային միջոցառումներ	❑	❑
7.7.2	Ջրամբարտակներ և ջրօգտագործում	❑	❑
7.7.3	Էկոհամակարգերի այլ ձևափոխումներ (նշել)	❑	❑
7.8	*Օտարածին և այլ պրոբլեմատիկ տեսակներ և գեներ*	❑	❑
7.8.1	Օտարածին տեսակների ներխուժում	❑	❑
7.8.2	Պրոբլեմատիկ (վնասատու) տեղական տեսակներ	❑	❑
7.8.3	Օտարածին գենետիկական նյութ գեն	❑	❑
7.9	*Աղտոտում*	❑	❑
7.9.1	Կենցաղային ջրաղտոտում	❑	❑
7.9.2	Արդյունաբերական արտահոսքեր	❑	❑
7.9.3	Գյուղատնտեսական գործունեության հետևանքով առաջացած արտահոսքեր	❑	❑
7.9.4	Արտադրության և սպառման թափոններ	❑	❑
7.9.5	Մթնոլորտի աղտոտում	❑	❑
7.9.6	Վնասակար ֆիզիկական ներգործություններ (ձայնային, լուսային, ջերմային և այլն)	❑	❑
7.10	*Երկրաբանական աղետներ*	❑	❑
7.10.1	Երկրաշարժեր	❑	❑
7.10.2	Սողանքներ, հուսիններ	❑	❑
7.11	*Կլիմայի փոփոխություն և եղանակային աղետներ*	❑	❑
7.11.1	Բնակմիջավայրի փոփոխություն	❑	❑
7.11.2	Երաշտներ	❑	❑
7.11.3	Ջերմաստիճանային ծայրահեղություններ	❑	❑
7.11.4	Ջրհեղեղներ, սելավներ	❑	❑
7.11.5	Այլ ապառնալիք (նշել)	❑	❑
7.12	*Այլ (նշել)*	❑	❑
8.	ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ		
8.1	Օգտագործման իրավունքը		
8.2	Օգտագործման տեսակը		
8.3	Թույլատրված քանակը		
8.4	Փաստացի օգտագործված քանակը		
9.	ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ		
	Միջոցառման անվանումը	առկա	նախատեսվող
9.1	*Հողի/ջրի պահպանություն*	❑	❑
9.1.1	Հողային/ջրային տարածքների պահպանություն	❑	❑
9.1.2	Հողային/ջրային ռեսուրսների պահպանություն	❑	❑
9.2	*Հողի/ջրի կառավարում*	❑	❑
9.2.1	Տարածքների կառավարում	❑	❑
9.2.2	Օտարածին/պրոբլեմատիկ (վնասատու) տեսակների հսկում	❑	❑
9.2.3	Բնակավայրերի և բնական ընթացքների վերականգնում	❑	❑
9.3	*Տեսակների կառավարում*	❑	❑
9.3.1	Տեսակների որսի/հավաքի/առևտրի կառավարում	❑	❑
9.3.2	Տեսակների վերականգնում	❑	❑
9.3.3	Տեսակների վերաբնակեցում	❑	❑
9.3.4	Ex-situ պահպանություն	❑	❑
9.4	*Կրթություն և իրազեկում*	❑	❑
9.4.1	Կրթություն	❑	❑
9.4.2	Ուսուցում	❑	❑
9.4.3	Իրազեկում և հաղորդակցություն	❑	❑
9.5	*Օրենսդրություն և քաղաքականություն*	❑	❑
9.5.1	Օրենսդրություն	❑	❑
9.5.2	Քաղաքականություն և կարգավորում	❑	❑

9.5.3	Մասնավոր սեկտորի ստանդարտներ	❑	❑
9.5.4	Տեխնիկական և օրենքի կիրառման ուժեղացում	❑	❑
9.6	*Ապրուստի, տնտեսական և այլ խթաններ*	❑	❑
9.6.1	Ապրուստի այլընտրանքային միջոցներ, կազմակերպություններ	❑	❑
9.6.2	Փոխհատուցում	❑	❑
9.6.3	Շուկայական լծակների կիրառում	❑	❑
9.6.4	Վճարումներ պահպանության համար	❑	❑
9.6.5	Ոչ դրամային արժեքներ	❑	❑
9.7	*Այլ (նշել)*	❑	❑
10	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ		
11	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		
12	ՆՇՈՒՄՆԵՐ		
13	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂԸ		
	Անունը, ազգանունը		
	Պաշտոնը		
	Կազմակերպությունը		
	Աշխատանքի վայրը		
	Հեռախոսի համարը		
	Ֆաքսի համարը		
	Էլեկտրոնային հասցեն		

Հավելված N 2

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Փաստաթղթի գրանցման հերթական համարը	Փաստաթուղթը տրամադրող մարմնի անվանումը	Փաստաթուղթը ստորագրող պաշտոնատար անձի անունը, ազգանունը	Փաստաթղթի տրամադրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Փաստա-թղթի տեսակը	Փաստա-թղթի վերնագիրը	Փաստա-թղթի էջերի թիվը	Փաստաթղթի գրանցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը
1	2	3	4	5	6	7	8

Հավելված N 3

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Հայտի գրանցման հերթական համարը	Հայտի ստացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Հայտատուի տվյալները			Պետական կադաստրից օգտվելու նպատակը	Պահանջվող տեղեկատվություն			Տվյալների տրամադրման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը	Ստորագրությունը
		կազմակերպության անվանումը	անունը, ազգանունը	հասցեն, հեռախոսը		համառոտ բովանդակությունը	տրամադրման ձևը	էջերի թիվը		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11